Ոչ ռեզիդենտ Իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղ, ներկայացուցչություն) և հիմնարկի բանկային կամ առարկայազուրկ մետաղական հաշվի բացման փաստաթղթերի ցանկ

1. Օտարերկրյա հիմնադիր իրավաբանական անձի[1] հիմնադրի կանոնադրության և (կամ) հիմնադիր այլ համազոր փաստաթուղթը՝ գրանցման երկրի օրենսդրությանը համապատասխան.
2. Պետական իրավասու մարմնի կողմից տրված վկայականը կամ այլ համազոր փաստաթուղթ, որով հավաստվում է օտարերկրյա հիմնադիր իրավաբանական անձի գրանցված լինելու փաստը և տեղեկատվությունը՝ վերջինիս գտնվելու վայրի հասցեի վերաբերյալ,
3. Օտարերկրյա հիմնադիր իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի չափի, գրանցված սեփականատերերի վերաբերյալ պետական իրավասու մարմնի կողմից տրված վկայականը, նաև այլ համազոր փաստաթուղթ,
4. Օտարերկրյա հիմնադիր իրավաբանական անձի իրավասու մարմնի որոշում(ներ)ն առանձնացված ստորաբաժանում (մասնաճյուղ, ներկայացուցչություն) կամ հիմնարկ ստեղծելու և դրա կանոնադրությունը հաստատելու, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանման կամ հիմնարկի ղեկավար կամ նրա ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու մասին.
5. Օտարերկրյա իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման (մասնաճյուղի, ներկայացուցչության), հիմնարկի ղեկավարի կամ նրա ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի անձը հաստատող փաստաթուղթը.
6. Օտարերկրյա հիմնադիր իրավաբանական անձի կողմից առանձնացված ստորաբաժանման (մասնաճյուղ, ներկայացուցչություն) կամ հիմնարկի ղեկավարին կամ նրա ժամանակավոր պաշտոնակատարին տրված լիազորագիրը (առկայության դեպքում).
7. Օտարերկրյա իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման կամ հիմնարկի կանոնադրությունը, հաշվառման վկայականը կամ այլ համազոր փաստաթուղթ.
8. Օտարերկրյա իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի սեփականատերեր (բաժնետերեր, մասնակիցներ, փայատերեր) հանդիսացող ֆիզիկական անձանց համար՝ անձը հաստատող փաստաթղթերը.

---

[1] Եթե հիմնադիր օտարերկրյա իրավաբանական անձը չունի հիմնադիր փաստաթղթեր կամ ներկայացված փաստաթղթերը չեն պարունակում դրույթներ առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ ստեղծելու լիազորություններ ունեցող մարմինների մասին, ապա սույն ենթահավելվածի 1.4. ենթակետի 1-5-րդ կետով նախատեսված փաստաթղթերի փոխարեն ներկայացվում են իրավասու մարմնի (կամ օտարերկրյա իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի) տված տեղեկանքները՝ հիմնադիր փաստաթղթերի ցանկի և առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ ստեղծելու վերաբերյալ որոշում ընդունած մարմնի նման լիազորություններ ունենալու մասին:

9. Հաճախորդի կանոնադրական կապիտալի սեփականատերեր (բաժնետերեր, մասնակիցներ, փայատերեր) հանդիսացող իրավաբանական անձանց համար՝ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց բանկային կամ առարկայազուրկ մետաղական հաշվի բացման փաստաթղթերի ցանկի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 13-րդ և 14-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը:
10. Լիցենզավորվող գործունեություն իրականացնելու դեպքում՝ լիցենզիան,
11. Լիազորված անձանց դեպքում՝ լիազորագիրը.
12. Ստորագրությունների նմուշների և կնիքի (առկայության դեպքում) դրոշմի քարտը.
13. Ստորագրությունների նմուշում որպես 1-ին և 2-րդ կարգի ստորագրության իրավունք ունեցող անձանց անձը հաստատող փաստաթղթերը.
14. Հաշվի բացման դիմում-պայմանագիրը.

15. Հայաստանի ֆինանսական համակարգից օգտվելու տնտեսական կամ այլ իրավաչափ հիմնավորում, օր.՝

- Հայաստանում բիզնես շահերը (օր.՝ շուկայի դիվերսիֆիկացում, ընդլայնում և տեղայնացում, համատեղ ձեռնարկություններ և գործընկերություններ, օտարերկրյա ներդրումներ և այլն):
- Պորտֆելի դիվերսիֆիկացում (օր.՝ ռիսկերի կառավարում՝ ներդրումների բաշխման միջոցով և այլն)

16. Տրված հիմնավորումների հիմք հանդիսացող համապատասխան փաստաթղթեր:

<u>Ծանուցում.</u>

<u>Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանումների և վերջիններիս հետ կապված ֆիզիկական անձանց օտարալեզու բոլոր փաստաթղթերը ներկայացվում են նոտարական վավերացմամբ հայերեն լեզվով թարգմանությամբ, բացառությամբ ռուսերեն և/կամ անգլերեն լեզուներով ներկայացվող փաստաթղթերի (տվյալ դեպքում փաստաթղթերի պատճենները պետք է լինեն հյուպատոսական,նոտարական և/կամ ապոստիլով վավերացված):</u>

<u>Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել նաև «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կարգով» սահմանված այլ փաստաթղթեր:</u>

<u>Ռուսաստանի և Բելառուսի հետ առնչություն ունեցող իրավաբանական անձանց համար, հաշվի առնելով մեր թղթակից բանկի քաղաքականությունը, Եվրոյով միջազգային փոխանցումները կարող են սահմանափակվել՝ կախված վերոնշյալ երկրների հետ կապի բնույթից:</u>